Արձանագրություն N 2

Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի հագեցման համար անհրաժեշտ էլեկտրական սարքերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/36» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստիին

ք. Երևան «28» «Հունիսի» 2023թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ե. Էլիբեկյան
Հանձնաժողովի անդամներ Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Ա.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան
Բացակայում էր՝ Հ. Խուրշուդյանը

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ե. Էլիբեկյան)

Ընդունել ի գիտություն, որ 05.06.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի հունիսի 20-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի հունիսի 21-ին ժամը 14:00-ին: 2023 թվականի հունիսի 22-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Հրանտ Գրիգորյան» ՍՊԸ		09104299
2	«Գ.Գ.Է. Հոլդինգ» ՍՊԸ		01053569
3	«Լինարե» ՍՊԸ	linare50@mail.ru	09212215
4	«ՎԻԷԼ ՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ		02235463
5	«Fidhar» ՍՊԸ		04440728
6	«Ստրոյիննովացիի»		04243812
7	«Լեդարմ» ՍՊԸ	ledarmarmenia.am@gmail.com	00517511
8	«Լեյկս Ռեզորտ» ՍՊԸ		06962935
9	«Սվետան» ՍՊԸ	svetan6162@gmail.com	00212858

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ե. Էլիբեկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են անհամապատասխանություններ՝ թե հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասով, թե հրավերի պահանջների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ե. Էլիբեկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել է մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումները՝ ըստ մասնակիցների.

«Հրանտ Գրիգորյան» ՍՊԸ

Հարգելի մասնակից

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/36» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել՝ հրավերի պահանջներով Հավելված 1-ի՝ դիմում-հայտարարությունում նշել էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև 1-ին ենթակետից առաջ բացակայում են «իրեն փոխկապակցված անձինք» բառերը, խնդրում ենք շտկել և շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ: Անհրաժեշտ է շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ Ձեր կողմից առաջարկվոց բոլոր չափաբաժիններում (1, 2, 3, 4, 5, 6 և 7-րդ) նշել հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները՝ առանց թարգմանության, ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, ինչպես նաև ներկայացնել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները և շտկված հստակեցված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Լինարե» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/36» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 8-րդ չափաբաժնի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ առանց թարգմանության, ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, ինչպես նաև ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները և շտկված հստակեցված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ե. Էլիբեկյան

Անդամներ՝ _____ Վ. Վահանյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Հ. Սարգսյան